ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«10» սեպտեմբերի 2019 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է **Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռոբերտ Ասատրյանը:**

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 24 (քսանչորս) անդամներ՝

Ս.Բալասանյանը, Հ.Կարապետյանը, Լ.Խաչատրյանը, Տ.Հովհաննիսյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյան, Վ.Եդիգարյանը, Վ.Հունանյանը, Գ. Սարգսյանը, Կ.Միքայելյանը, Գ.Գրիգորյանը, Կ.Թաթարյանը, Ա. Տոնոյանը, Ս.Աստոյանը, Ա.Խաչատրյանը, Ա. Աղանյան, Ռ.Սարգսյանը, Ս.Մարտիրոսյանը, Հ.Եղիազարյանը, Լ.Բարսեղյան, Ա.Գրիգորյանը, Ա.Ղարաղազարյանը, Հ.Պողոսյանը, Ա. Առաքելյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ.Ասատրյանը:

Նիստին հրավիրված են և մասնակցում են՝ համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետերը, ինչպես նաև ՀԼՄ-ների և ՀԿ-ների ներկայացուցիչներ:

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հերթական յոթերորդ նստաշրջանի 2019 թվականի սեպտեմբերի 10-ին կայանալիք առաջին նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ստեղծել ավագանու չորս անդամից բաղկացած ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):
2. Հաստատել հանձնաժողովի անհատական հետևյալ կազմը՝
   1) Հասմիկ Լևոնի Եղիազարյան - «Հայկական Վերածնունդ» խմբակցություն,
   2) Արմեն Հարությունի Աղանյան - «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն,
   3) Կարեն Ժորայի Միքայելյան - «Բալասանյան» խմբակցություն,
   4) Արտյոմ Հակոբի Ղարաղազարյան– ավագանու անկախ անդամ:
3. Սահմանել, որ հանձնաժողովն իր լիազորությունները պահպանում է մինչև ավագանու հաջորդ հերթական նստաշրջանի հանձնաժողովի ձևավորումը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 210–Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 210-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1–ին կետի 1-ին ենթակետի «3 623 969 800 (երեք միլիարդ վեց հարյուր քսաներեք միլիոն ինը հարյուր վաթսունինը հազար ութ հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «3 642 640 100 (երեք միլիարդ վեց հարյուր քառասուներկու միլիոն վեց հարյուր քառասուն հազար հարյուր)» թվով և բառերով,

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «3 963 275 500 (երեք միլիարդ ինը հարյուր վաթսուներեք միլիոն երկու հարյուր յոթանասունհինգ հազար հինգ հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «3 981 945 800 (երեք միլիարդ ինը հարյուր ութսունմեկ միլիոն ինը հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր)» թվով և բառերով:

2. Բյուջեի հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համապատասխանաբար՝ NN 1,2,3,4 հավելվածների:

3.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել համապատասխան փոփոխություններն՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ 69 267 300 (ՎԱԹՍՈՒՆԻՆԸ ՄԻԼԻՈՆ ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՅՈԹ ՀԱԶԱՐ ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԸ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի (այսուհետ՝ բյուջե) վարչական մասի պահուստային ֆոնդի 3-րդ եռամսյակի նախատեսված 69 267 300 (վաթսունինը միլիոն երկու հարյուր վաթսունյոթ հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամն ուղղել բյուջեի ֆոնդային մաս:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունը՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 2 (ԵՐԿՈՒ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Գյումրի համայնքի թվով 2 (երկու) կազմակերպություններին, որպես սուբսիդիա, հատկացնել 1109000 (մեկ միլիոն հարյուր ինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, գործուղման, միջոցառումների, համակարգչի ձեռքբերման և անհրաժեշտ այլ ծախսերի համար՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի 8/1/1/ և 8/2/3 գործառական դասակարգման (4511) «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքին, որպես նվիրատվություն, հատկացնել 340 000 (երեք հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Արմենուհի Մխիթարյանի «Լռության շշուկներ» և «Իրական հեքիաթ» բանաստեղծությունների և պատմվածքների ժողովածուները տպագրելու համար:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 146 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՎԵՑ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թվով 146 (մեկ հարյուր քառասունվեց) անձանց կանխիկ հատկացնել 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՌՈԶԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Ռոզա Եղիազարյանի ընտանիքին, որպես դրամական օգնություն, հատկացնել՝ 200.000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ԴԻԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Դիանա Հակոբյանի ընտանիքին, որպես դրամական օգնություն, հատկացնել՝ 200.000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ԱՆԱՀԻՏ ԱՎԴԱԼՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

Ավագանու նիստին ներկայացավ Գյումրի համայնքի ավագանու անդամ Ս. Աստոյանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Անահիտ Ավդալյանին, որպես դրամական օգնություն, հատկացնել 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ ԽԱՂԵՐՈՒՄ ՉԵՄՊԻՈՆ ԴԱՐՁԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Մ. ՂԱԶԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 2019 թվականի աշխարհի և Եվրոպայի առաջնություններում, Համաշխարհային Համահայկական յոթերորդ խաղերում չեմպիոն դարձած մարզիկներին և նրանց մարզիչներին

շնորհել դրամական պարգևներ 17 440 000 (տասնյոթ միլիոն չորս հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Մ. ՂԱԶԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն կազմակերպության Գյումրի համայնքի ղեկավարի ներկայացրած տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լյովա Սլավիկի Հաշարյանի թեկնածությանը (ծնված՝ 1984 թվականի հունիսի 10-ին, անձնագիր՝ AR0430483, տրված՝ 2017 թվականի օգոստոսի 22-ին Հայաստանի Հանրապետության ոստիկանության 016-ի կողմից, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Մենդելեևի տուն 6, հանրային ծառայությունների համարանիշ՝ 2024190596):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լյովա Սլավիկի Հաշարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

13. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ 98 ԵՎ ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ 144 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս. ՋԱՆՈՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 1 (Լ.Բարսեղյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սահմանել արտոնություն կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան 98 և Մայակովսկու 144 հասցեներում գտնվող շենքերի և շինությունների 2019 թվականի անշարժ գույքի հարկերի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով համապատասխանաբար՝ հողի հարկի գծով՝ 19105 (տասնինը հազար հարյուր հինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից մայր գումարը կազմում է 18746(տասնութ հազար յոթ հարյուր քառասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 359 (երեք հարյուր հիսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ և գույքահարկի գծով՝ 179352 (մեկ հարյուր յոթանասունինը հազար երեք հարյուր հիսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, որից մայր գումարը կազմում է 175986 (մեկ հարյուր յոթանասունհինգ հազար ինը հարյուր ութսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 3366

(երեք հազար երեք հարյուր վաթսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 198457 (մեկ հարյուր իններսունութ հազար չորս հարյուր հիսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպությանը պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Լազոյի փողոց N 1 հասցեի մանկապարտեզից առանձնացված (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 16052019-08-0040) Լազոյի փողոցի N 4/2 հասցեի 327,98 (երեք հարյուր քսանյոթ ամբողջ ինսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցված բնակավայրերի նպատակային նշանակության հողերի, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,04277 (զրո ամբողջ չորս հազար երկու հարյուր յոթանասունյոթ հարյուրհազարերորդական) հեկտար ընդհանուր մակերեսով հողամասը անհատույց օգտագործման իրավունքով 99 (իններսունինը) տարի ժամկետով տրամադրել կազմակերպությանը՝ ծանրամարտի մարզադպրոցի սաների մարզումները պատշաճ կարգով կազմակերպելու պայմանների բարելավման նպատակով: 30,92 (երեսուն ամբողջ իններսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հարթակը թողնել ընդհանուր օգտագործման՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 1 (Ա. Գրիգորյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և հաստատել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՓՈՂՈՑ N 7/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի փողոց N 7/6 հասցեում ինքնակամ կառուցված 4.81 (չորս ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով աստիճանները և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 4.81 (չորս ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը 5 (հինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրել տվյալ շինությունը կառուցած Հովհաննես Պողոսյանին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված աստիճանների և հողամասի վարձակալության վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 61000 (վաթսունմեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Օրենքով սահմանված կարգով կնքել գույքի վարձակալության պայմանագիր:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑ N 2/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Պարույր Սևակի փողոց N 2/7 հասցեում ինքնակամ կառուցված 5.97(հինգ ամբողջ իննսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով աստիճանները և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 5.97(հինգ ամբողջ իննսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը 5 (հինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրել տվյալ շինությունը կառուցած Գևորգ և Անահիտ Չախմախչյաններին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված աստիճանների և հողամասի վարձակալության վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 71640 (յոթանասունմեկ հազար վեց հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Օրենքով սահմանված կարգով կնքել գույքի վարձակալության պայմանագիր:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՓՈՂՈՑ N 4/23 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 1 (Ա. Առաքելյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 14062018-08-0014) Սայաթ-Նովայի փողոց N 4/23 հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ 0,040482 (զրո ամբողջ քառասուն հազար չորս հարյուր ութսուներկու միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը մրցութային կարգով, վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել, որպես ծաղկանոց բարեկարգելու, իսկ ձմռանը՝ սահադաշտ կազմակերպելու նպատակով:
2. Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրման մրցույթի մեկնարկային վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 120000 (մեկ հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 3 (երեք) տարի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 17/14 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 24062019-08-0009) Վազգեն Սարգսյան փողոց N 17/14 հասցեի 0,03 (զրո ամբողջ երեք հարյուրերորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը (կադաստրային ծածկագիր 08-001-0336-0007) մրցույթով կառուցապատման իրավունքով 5 (հինգ) տարի ժամկետով տրամադրել օգտագործման՝ սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի մրցույթի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել տարեկան՝ 200000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի N 107-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Օրակարգի 20-րդ հարցից ավագանու նիստից բացակայեց Գյումրի համայնքի ավագանու անդամ Գ.Սարգսյանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22

դեմ – 0
ձեռնպահ – 1 (Ա. Գրիգորյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 107-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) 5-րդ տողի 6-րդ սյունակի «4 250 000» թիվը փոխարինել «3 400 000» թվով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

21. ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 12082019-08-0014) Արտակ եպիսկոպոս Սմբատյան փողոց N 15 հասցեի 24,85 (քսանչորս ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով անշարժ գույքը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցված բնակավայրերի նպատակային նշանակության հողերի, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00334 (զրո ամբողջ երեք հարյուր երեսունչորս հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրել Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդարանին՝ հասարակական սանհանգույց կառուցելու նպատակով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՃԵՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 2/1 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 30052019-08-0018) Աճեմյան փողոց N 2/1 հասցեի 1002,76 (մեկ հազար երկու ամբողջ յոթանասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով գրադարանը, 1028,51 (մեկ հազար քսանութ ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շենքը, 69,29 (վաթսունինը ամբողջ քսանինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը, 36,17 (երեսունվեց ամբողջ տասնյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը և դրանց կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցված 0,21624 (զրո ամբողջ քսանմեկ հազար վեց հարյուր քսանչորս հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական

կառուցապատման գործառնական նշանակությամբ հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի N 111-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Չայկովսկու փողոց N 6/6 հասցեի հողամասը «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց օգտագործման տրամադրելու մասին» N 111-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) նախաբանում «2-րդ» թիվը փոխարինել «1-ին» թվով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի N 109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Օզանյան փողոց N 16/3 հասցեի հողամասը մրցույթով վարձակալության իրավունքով տրամադրելու և հողամասի վարձավճարի մեկնարկային չափը հաստատելու մասին» N 109-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) նախաբանում «16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ» թվերը և բառերը փոխարինել «18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ» թվերով և բառերով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N 118-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի հուլիսի 11-ի N 105-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի

Գործարանային փողոց N 2/6 հասցեի շինությունները «Հայաստան» համահայկական հիմնադրամին անհատույց (մշտական) օգտագործման տրամադրելու մասին» N 118-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.
«3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ֆրանկ Մյուլլեր» ընկերությանը և «Հայաստան» համահայկական հիմնադրամին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից»:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

26. «ԳՅՈՒՄՐՈՒ ՍՊՈՐՏ ՍԻԹԻ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.«Գյումրու Սպորտ Սիթի» զարգացման հիմնադրամին կառուցապատման իրավունքով տրամադրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ Գործարանային փողոց N 12 հասցեի 5,5 (հինգ ամբողջ հինգ տասնորդական) հեկտար մակերեսով հողամասը՝ մականախաղի մարզական համալիր կառուցելու նպատակով:
2. Հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վարձավճար սահմանել 19,0 (տասնինը) Հայաստանի Հանրապետության դրամ 1,0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց:
3. Մարզահամալիրի կառուցմանը ներկայացվող պայմաններն ու սահմանափակումները մանրամասնել համայնքի ղեկավարի համապատասխան որոշմամբ և հողի օգտագործման պայմանագրով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Գյումրու Սպորտ Սիթի» զարգացման հիմնադրամին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 50/5 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ «ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՒՆԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող Մովսես Խորենացու փողոց N 50/5 հասցեի 8,8 (ութ ամբողջ ութ տասնորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը 99 (իննսունինը) տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել «Արթուր Ալեքսանյանի անվան հունա-

հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առեվտրական կազմակերպությանը՝ մարզադպրոց կառուցելու նպատակով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԱՐԻԱՄ ԵՎ ԵՐԱՆՈՒՀԻ ԱՍԼԱՄԱԶՅԱՆ ՔՈՒՅՐԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ»ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ. ԹՈՎՄԱՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Տալ համաձայնություն կազմակերպության տնօրենի Գյումրի համայնքի ղեկավարի ներկայացրած ժամանակավոր պաշտոնակատար Միքայել Ռուբենի Վարդպարոնյանի թեկնածությանը (ծնված՝ 1992 թվականի ապրիլի 10-ին, անձնագիր՝ AS 0325062, տրված՝ 2018 թվականի օգոստոսի 8-ին Հայաստանի Հանրապետության ոստիկանության 064-ի կողմից, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի Լևոն Մադոյան փողոց շենք 124, բնակարան 19, հանրային ծառայությունների համարանիշ՝ 2004920416):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Միքայել Ռուբենի Վարդպարոնյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

29. ՌՈԲԵՐՏ ԳՐԻՇԱՅԻ ՄԼՔԵՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ռոբերտ Գրիշայի Մլքեյանին շնորհել «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում է Ռոբերտ Գրիշայի Մլքեյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

30. ԱՐԿԱԴԻ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Արկադի Հովհաննեսի Տեր-Թադևոսյանին շնորհել «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արկադի Հովհաննեսի Տեր-Թադևոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ ԵՎ ՊՈՒՐԱԿՆԵՐ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն Գյումրի համայնքի ղեկավարի ներկայացրած «Գյումրու զբոսայգիներ և պուրակներ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սերգո Մարտինի Սարգսյանի թեկնածությանը (ծնված՝ 1979 թվականի հունվարի 16-ին, անձնագիր՝ AN 0222111, տրված՝ 2012 թվականի օգոստոսի 01-ին, Հայաստանի Հանրապետության ոստիկանության 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի, Գայի փ.,շ 4 բն.1, հանրային ծառայությունների համարանիշ N 2601790229):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սերգո Մարտինի Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական երկրորդ նիստի գումարման օր սահմանել 2019 թվականի հոկտեմբերի 8-ը ժամը 12^{00}-ն:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 38-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 16-ի «Մարզական ավան կառուցելու նպատակով առանձնացված 12,5 հա մակերեսով հողամասի մրցույթով կառուցապատման իրավունքի տրամադրման վարձավճարի նախնական չափ սահմանելու մասին» N 38-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվեց

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Ս. Բալասանյան _____

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Տ. Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

Ս. Աստոյան _____

Ա. Խաչատրյան _____

Ա. Աղանյան _____

Ռ. Սարգսյան _____

Ս. Մարտիրոսյան _____

Հ. Եղիազարյան _____

Լ. Բարսեղյան _____

Ա. Գրիգորյան _____

Ա. Ղարաղազարյան _____

Հ. Պողոսյան _____

Ա. Առաքելյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՄԱՐԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

քաղաք Գյումրի
«10» սեպտեմբերի 2019 թվական